result of a **Cardholder's Bodily Injury** or **Illness** whilst on a **Journey**, **International SOS** will arrange the transportation for such **Dependent Children** by **Common Carrier** to their normal place of residence. Qualified attendants will be provided when deemed appropriate by **International SOS**.

### **Specific Exclusions Applying to SECTION 7**

7.6 In addition to the General Exclusions, the following treatment, items, conditions, activities and their related or consequential expenses are specifically excluded from the cover provided by this section:

- (i) Expenses incurred after 12 (twelve) months from the date of the **Accident** or first manifestation of **Illness**;
- (ii) Dental expenses unless incurred as a result of an **Illness** or **Bodily Injury**;
- (iii) Optical expenses, unless incurred as a result of an **Illness** or **Bodily Injury**;
- (iv) Treatment provided other than by a qualified medical practitioner;
- (v) Expenses incurred within the **Principal Country of Residence**;
- (vi) Expenses incurred which are non-medical in nature such as but not limited to telephone calls, newspapers, internet charges;
- (vii) **Services** rendered without the authorisation and/or intervention of **International SOS**;
- (viii) Expenses which would have still been payable if the event giving rise to the intervention of **International SOS**, had not occurred;
- (ix) Elective cosmetic surgery;
- (x) Expenses incurred for treatment not verified by a medical report;
- (xi) Expenses for treatment that an **International SOS Physician** considers are not medically necessary whilst on a **Journey** and can be treated on the **Cardholder's** return to their **Principal**

12. այնպիսի ծախսերի առաջացման դեպքեր, երբ Քարտատերը «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության բժշկի կարծիքով ֆիզիկապես ունակ է վերադառնալ իր հիմնական բնակության երկիր՝ որպես սովորական ուղևոր և առանց բժշկական ուղեկցման,

13. յուրաքանչյուր Քարտապանի և յուրաքանչյուր իրադարձության համար առաջին 50 (հիսուն) ԱՄՆ դոլարը, ինչպես նշված է Հավելված 1-ում:

## ԲԱԺԻՆ 8: ՈՒՂԵՔԵՌ ԵՎ ԴՐԱՍ

Ուղեբեռի կորուստ

8.1 Եթե ճանապարհորդության ընթացքում Քարտատիրոջ ուղեբեռը կորել է կամ վնասվել, Ապահովագրական ընկերությունը փոխհատուցում է Քարտատիրոջը նման կորստի կամ վնասի դիմաց՝ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սահմանաչափերի:

8.2 Ապահովագրական ընկերության կողմից փոխհատուցում ստանալու համար Քարտատերը պետք է տրամադրի ուղեբեռի մանրամասն նկարագրություն՝ գնման ժամանակահատվածի և արժեքի մասին: Անդորրագրերը, ապրանքագրերը կամ այլ հաստատումները պարտադիր են: Գողացված կամ վնասված ունեցվածքը գնահատվում է կորստի ժամանակ ունեցած մաշվածության աստիճանին համապատասխան:

8.3 Դրամի կորուստ - Դրամի կորստի փոխհատուցում չի նախատեսվում ծածկույթով:

## ԲԱԺԻՆ 8-ի բացառություններ

8.4 Ի լրումն հիմնական բացառությունների, հետևյալ կետերը, պայմանները, գործողությունները և դրանց առնչվող կամ դրանցից բխող ծախսերը բացառվում են և չեն ընդգրկվում Ուղեբեռի կորուստի ապահովագրման ծածկույթի մեջ՝

1. ոչ ավել, քան 250 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր իրի համար,
2. ոչ ավել, քան 300 ԱՄՆ դոլար ընդհանուր բոլոր ոսկերչական և թանկարժեք իրերի համար,
3. տրանսպորտային միջոցների ու նավերի արքեսուարների հետ կապված հայտեր,
4. Հետևյալ պատճառներով առաջացող կորուստ կամ վնաս՝

ա) Ուտիճ, տզեր, մաշվածություն, մթնոլորտային կամ կլիմայական պայմաններ, աստիճանական վատթարացում,

## Country of Residence;

- (xii) Expenses incurred where the **Cardholder** in the opinion of the **International SOS Physician** is physically able to return to his/her **Principal Country of Residence** seated as a normal passenger and without medical escort; and
- (xiii) The first USD 50 (fifty) per event per **Cardholder**; being the Excess as stated in Appendix 1.

## SECTION 8: BAGGAGE AND MONEY

Loss of Baggage

8.1 If, whilst on a **Journey**, a **Cardholder** sustains accidental loss of, theft of or damage to **Baggage**, the **Underwriters** will pay the **Cardholder** in respect of such loss, theft or damage up to the limits shown in Appendix 1 of this **Certificate**.

8.2 In order to be reimbursed by the **Underwriters**, the **Cardholder** must provide a detailed description of the property along with its date of purchase and value. Bills, invoices or other proof are required. Stolen or damaged property will be valued allowing for wear and tear at the time of the loss, theft or damage.

8.3 Loss of Money - not covered

## Specific Exclusions Applying to SECTION 8

8.4 In addition to the General Exclusions, the following treatment, items, conditions, activities and their related or consequential expenses are excluded from the cover provided by this Section:

- (i) More than USD 250 (two hundred and fifty) in respect of any one article;
- (ii) More than USD 300 (three hundred) in respect of **Valuables** in total;
- (iii) Claims in respect of accessories for vehicles or boats.
- (iv) Loss or damage due to:
  - a) moths, vermin, wear and tear, depreciation, atmospheric or climatic condition or gradual deterioration;



<p>բ) Տեխնիկական կամ էլեկտրական խափանում,  գ) Մաքրման, նորոգման, վերականգնման կամ փոփոխման ցանկացած գործընթաց,</p> <p>5. Ոչ ավել, քան ընդհանուր արժեքի ողջամիտ համամասնությունն է, որի մաս է կազմում վնասված կամ կորած իրը,</p> <p>6. Կորուստի կամ գողության դեպքեր, որոնց մասին չի հայտնվել ոստիկանությանը, ճանապարհորդությունն իրականացնող հաստատությանը կամ բեռնաթափման գործակալին վնասը հայտնաբերելուց հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում՝ և չի ստացվել վնասը տեղի ունենալու մասին գրավոր հաստատում),</p> <p>7. Կորուստ կամ վնասվածք, որն առաջացել է մաքսային ծառայությունների կողմից ցանկացած իրավունքով բռնագրավման կամ կալանքի վերցնելու արդյունքում,</p> <p>8. Անպաշտպան թողնված Ուղեբեռի կորուստ, գողություն կամ վնասում.  ա) բացառությամբ եթե դրանք գտնվել են փակ բեռնախցիկում,  բ) եղել է տրանսպորտային միջոցում/կցորդում և փակված չի եղել բեռնախցիկում:</p> <p>9. Սպորտային սարքավորումների կորուստ կամ հեծանիվների, վարձակալված սարքավորումների կորուստ կամ վնաս,</p> <p>10. Կոնտակտային կամ միկրո-կոնտակտային լինզաների կորուստ, գողություն կամ վնասում,</p> <p>11. Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ 50 դոլար յուրաքանչյուր հայտի համար ինչպես նշված է Հավելված 1-ում</p> <p>12. Քարտատիրոջ կողմից փոխառված կամ վարձակալված անձնական օգտագործման իրերի կորուստ,</p> <p>13. Ավիաընկերության կամ այլ ճանապարհորդական ընկերության կողմից ստուգված Ուղեբեռում գտնվող Դրամի կորուստ, գողություն կամ վնասվածք,</p> <p>14. Տրանսպորտային միջոցով/կցորդով փոխադրվող Ուղեբեռի կամ Դրամի կորուստ, գողություն կամ վնաս,</p> <p>15. Կարևոր փաստաթղթերի կորուստ, գողություն կամ վնասվածք:</p>	<p>b) mechanical or electrical failure;</p> <p>c) any process of cleaning, repairing, restoring or alteration;</p> <p>(v) More than a reasonable proportion of the total value of the set where the lost or damaged article is part of a pair or set;</p> <p>(vi) Loss or theft not reported to either the police within 24 (twenty four) hours of discovery and a written report obtained or airline, shipping line or their handling agent within any timescales stated in their terms and conditions and a ‘Property Irregularity Report’ obtained from such carrier.;</p> <p>(vii) Loss or damage due to confiscation or detention by customs or any other authority;</p> <p>(viii) Loss or theft of or damage to <b>Baggage</b> left unattended:  a) unless locked in <b>Your</b> accommodation;  b) in a motor vehicle/ trailer/ caravan unless secured in a locked compartment.</p> <p>(ix) Breakage of sports equipment in use or loss of or damage to bicycles or hired equipment;</p> <p>(x) Loss of, theft of or damage to contact, corneal or micro-corneal lenses;</p> <p>(xi) The first USD 50 per event being the Excess as stated in Appendix 1;</p> <p>(xii) Loss of personal goods borrowed, hired or rented by the <b>Cardholder</b>;</p> <p>(xiii) Loss or theft of or damage for <b>Money</b> from <b>Baggage</b> which is checked in with an airline or other travel company;</p> <p>(xiv) <b>Baggage</b> or <b>Money</b> that is lost, stolen or damaged whilst being transported in a motor vehicle, trailer or caravan.</p> <p>(xv) Loss or theft of or damage to essential documents.</p>
--	---

**ԲԱԺԻՆ 9. ԹՈՒՉՔԻ ՉԵՂԱՐԿՈՒՄ, ԲԱՏ ԹՈՂՈՒՄ**

9.1 Եթե ճանապարհորդության նախատեսված պլանի չեղարկման կամ հետաձգման ուղղակի հետևանքով Քարտապանը կրում է ծախսեր, որն ուղղակի հետևանք է.

1. Քարտապանի հիվանդության կամ մարմնական վնասի,
2. Ազգականի մահվան, հիվանդության կամ Մարմնական վնասի,
3. Քարտատիրոջ ներգրավվածությամբ պարտադիր կարանտինի, դատարան կանչված լինելու կամ առևանգման,
4. Գործադուլի, քաղաքական հուզումների, մեխանիկական խափանման կամ վատ եղանակային պայմանների հետևանքով հասարակական տրանսպորտի նախատեսված չվացուցակի խաթարման,
5. Ուժային կառույցների կողմից Քարտատիրոջ մեկնումը չեղարկելու,
6. Օդանավակայանի կողմից առաջացրած անսպասելի ուշացման,

ապա, Ապահովագրական ընկերությունը փոխհատուցում է Քարտատիրոջը նախապես վճարված, չօգտագործված և ավիաընկերության կողմից չփոխարինված հյուրանոցային և տրանսպորտային ծախսերը, որոնք կատարվել են Քարտատիրոջ մեկնման վայր հասնելու համար՝ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սահմանաչափերի:

**ԲԱԺԻՆ 9-ի հատուկ բացառություններ**

9.2 Ի լրումն հիմնական բացառությունների, հետևյալ կետերը, պայմանները, գործողությունները և դրանց առնչվող կամ դրանցից բխող ծախսերը բացառվում են և չեն ընդգրկվում Թոփքի չեղարկման, բաց թողնման ծածկույթի մեջ.

1. Ծախսեր, որոնք վճարման ենթակա կլինեին, եթե «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության միջամտությունը պահանջող պատահարը տեղի չունենար,
2. Աննշան հիվանդություններ և մարմնական վնասվածքներ, որոնք «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության թերապևտի կարծիքով կարող է պատշաճ բուժվել տեղում՝ առանց հոսպիտալացման և որոնք չեն խոչընդոտում Քարտապանին շարունակել ճանապարհորդությունը կամ աշխատանքը,

**SECTION 9: CANCELLATION**

9.1 If a **Cardholder** incurs expenses as the direct and necessary result of the cancellation, curtailment or re-arrangement of any part of the original itinerary for the **Cardholder's Journey** is the direct consequence of:

- (i) the **Cardholder** sustaining bodily injury or suffering illness;
- (ii) the death, bodily injury or illness of a **Relative**;
- (iii) compulsory quarantine, jury service, subpoena or hijacking involving the **Cardholder**;
- (iv) cancellation or curtailment of scheduled public transport services consequent upon strike, riot or civil commotion, mechanical breakdown or adverse weather conditions;
- (v) the **Cardholder's** leave being cancelled by the Armed Services
- (vi) the airport causing unexpected delay

then the **Underwriters** will pay the **Cardholder** for the unused portion of prepaid travel and accommodation expenses as included in the **Journey** as per the limits shown in Appendix 1 of this **Certificate**.

**Specific Exclusions Applying To SECTION 9**

9.2 In addition to the General Exclusions, the following treatment, items, conditions, activities and their related or consequential expenses are specifically excluded from the cover provided by this Section:

- (i) Expenses which would have still been payable if the event giving rise to the intervention of **International SOS**, had not occurred;
- (ii) Cases of minor **Illness** or **Bodily Injury** of the **Cardholder**, which in the opinion of the **International SOS Physician** can be adequately treated locally, and which do not prevent the **Cardholder** from continuing their travels or work;

3. Ցանկացած ընտանի կենդանու կամ կենդանու մահ, վնասվածք կամ հիվանդություն:
4. Մարդկանց տեղաշարժի ցանկացած կարանտինային պահանջ կամ սահմանափակում, ներառյալ սահմանների փակումը կամ տանը մնալու սահմանափակումները:
5. Ցանկացած ծախս, որը այնուամենայնիվ, կվճարվեր, եթե քարտապանը COVID-19-ի համար դրական թեստ չստանար:
6. Ցանկացած PCR կամ այլ COVID-19 թեստավորման արժեք:
7. Քարտապանի ինքնամեկուսացման կամ մեկուսացման ժամանակ օգտագործվող սննդամթերքն ու խմիչքը:

- (iii) Death, injury or illness of any pet or animal.
- (iv) Any quarantine requirements or restrictions in movement of people including border closures or stay at home restrictions.
- (v) Any expenses which would have still been payable if the Cardholder had not tested positive for COVID-19.
- (vi) Cost of any PCR or other testing for COVID-19.
- (vii) Food and Drink consumed whilst in Cardholder's self-isolation or quarantine.

**ԲԱԺԻՆ 10. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱՆՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Թռիչքի ուշացում**

10.1 Ապահովագրական ըկերությունը փոխհատուցում է Քարտատիրոջը, եթե նրա մեկնումը կամ վերադարձը առնվազն 4 ժամ ուշացել է և եղել է չվացուցակում նշված ժամանակից ուշ:

10.2 Քարտատիրոջը կետ 10.1-ով սահմանված վճարումները կատարվում են սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված առավելագույն սահմանաչափերի շրջանակներում՝ յուրաքանչյուր ուշացած ժամի համար, սակայն ոչ ավել քան 12 (տասներկու) ժամի համար: Հատուցում տրամադրվում է այն դեպքում, երբ Քարտատերը գրանցվել է տուրիստական կազմակերպության կողմից նրան տրամադրված չվացուցակին համապատասխան, ինչպես նաև Քարտատերն ունի գրավոր հաստատում ուղևորությունն իրականացնող հաստատության կողմից սույն բաժնով նշված դեպքերի հետևանքով թռիչքի ուշացման վերաբերյալ: Նման հաստատման մեջ պետք է նշված լինի ուշացման իրական ժամանակահատվածը:

10.3 Ուշացված ժամանակահատվածը հաշվարկվում է չվացուցակում նշված մեկնման նախատեսված ժամանակից սկսած: Եթե սկզբնական չվերթի չեղարկման պատճառով Քարտապանի չվերթը վերամրագրվում է այլ չվերթով, ապա ուշացման ժամանակահատվածը հաշվարկվում է սկզբնական չվերթի նախատեսված մեկնման ժամանակից:

**SECTION 10: INCONVENIENCE**

**Travel Delay**

10.1 In the event of the Cardholder's flight or sailing is delayed for at least 4 (four) hours on the outward or return Journey from the time shown in the carrier's travel itinerary as supplied to the Cardholder, the Underwriters will arrange a payment to the Cardholder.

10.2 The payment to the **Cardholder** under Section 10.1 is up to the limits as shown in Appendix 1 of this **Certificate**, per hour's delay, up to a maximum of 12 (twelve) hours, provided always that the **Cardholder** shall have checked-in according to the itinerary given to him or her by the tour operator or carrier and shall have obtained written confirmation from the airline or shipping line or their handling agents that the flight or sailing was delayed by an event described in this section. Such confirmation must state the actual period of the delay.

10.3 The delay period shall be calculated from the scheduled departure time of the flight or sailing shown in the itinerary. If the Cardholder is rebooked onto a different flight, due to the cancellation of the original flight, the delay period shall be calculated from the scheduled departure time of the original flight.

### Ուղեբեռի ուշացում

10.4 Քարտատիրոջ ուղեբեռի ժամանակավոր կորստի կամ սխալմամբ փոխարինվելու դեպքերում, որը տեղի է ունենում ճանապարհորդության ընթացքում՝ ոչ հիմնական բնակության երկրում և ճանապարհորդության մեկնման հատվածում (ոչ վերադարձի, նույնիսկ եթե վերադարձն իրականացվում է ոչ ուղղակի ճանապարհով), Ապահովագրական ընկերությունը հատուցում է Քարտատիրոջը՝ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սահմանաչափերի համաձայն և յուրաքանչյուր ուշացած ժամի համար, սակայն ոչ ավելի քան 12 (տասներկու) ժամի համար՝ բացառությամբ ուշացման առաջին 4 ժամերի: Նման ուշացման գրավոր հաստատում(ներ)ը պետք է ստացվի(են) ավիաընկերության, ուղևորությունը կամ փոխադրումը իրականացնող հաստատության կամ գործակալի կողմից և պետք է հաստատի (են) ուշացման փաստը, ինչպես նաև պարունակի(են) ուշացման իրական ժամանակահատվածը:

### Փաստաթղթերի փոխարինում

10.5 Այն դեպքում, երբ Քարտատերը կորցնում է կամ սխալմամբ փոխարինում է (մշտական կամ ժամանակավորապես) ճանապարհորդության ընթացքում անհրաժեշտ որևէ կարևոր փաստաթուղթ, ապա Ապահովագրական ընկերությունը կատարում է բոլոր խելամիտ ծախսերի հատուցումը, որոնք անհրաժեշտ են էական փաստաթղթերի (ներառյալ այնպիսի իրերի, ինչպիսիք են՝ համակարգչի սկավառակներն ու պրեզենտացիոն նյութերը) փոխարինման համար՝ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ում նշված սահմանաչափերի:

10.6 Բոլոր նման ծախսերը Ապահովագրողի անունից պետք է հաստատվեն «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության կողմից՝ մինչ դրանց կատարումը: Փոխարինման ծախսերը ենթակա չեն հատուցման այն դեպքերում, երբ նշված փաստաթղթերի փոխարինման ծախսերը գերազանցում են դրանց ֆիզիկական փոխարինման արժեքը: Քարտատիրոջ կողմից որևէ խնայողական պարտատոմսերի, բանկային փաստաթղթերի (չեկեր, ճանապարհորդական չեկեր և այլն) կորստի դեպքում դրանց իրական արժեքը չի փոխարինվում:

### Հարձակում

10.7 Ճանապարհորդության ընթացքում Քարտատիրոջ տրանսպորտային միջոցը հարձակման ենթարկվելու դեպքում, Ապահովագրական ընկերությունը հատուցում է Քարտատիրոջը պատանդի կարգավիճակում անցկացված յուրաքանչյուր օրվա համար՝ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ում նշված սահմանաչափերի՝ առավելագույնը 21 (քսանմեկ)օր:

### Baggage Delay

10.4 In the event of a **Cardholder's Baggage** being temporarily lost or misplaced on an outward part of a **Journey** by the airline, shipping line or their handling agents, the **Underwriters** will reimburse the **Cardholder** up to the limits as shown in Appendix 1 of this **Certificate** (for the purchase of immediate necessities / per hour's delay to a maximum of 12 (twelve) hours). Written confirmation of such delay must be obtained from the airline, shipping line or their handling agents stating the actual period of the delay.

### Document Replacement

10.5 In the event of a **Cardholder** losing or misplacing (either permanently or temporarily) any essential documents needed whilst on a **Journey**, the **Underwriters** will arrange the payment of all reasonable costs necessarily incurred for replacing essential documents (including such items as personal computer discs and presentation slides) up to the limits shown in Appendix 1 of this **Certificate**.

10.6 All such costs must be approved by the **Claims Administrator** on behalf of the **Underwriters** prior to their being incurred. Replacement costs shall not be payable for any loss consequent or resulting from the loss of said documents beyond the physical cost of replacing said documents. The intrinsic value of any savings bond, bankers bill of value (cheques, traveller's cheques and the like) or similar documents, if such is lost by a **Cardholder**, shall not be replaced.

### Hi-Jack

10.7 Should the **Cardholder's** means of transport be subject to a **Hi-jack** during a covered trip, the **Underwriters** will pay up to the limits shown in Appendix 1 of this **Certificate** for each day of detention for a maximum of 21 (twenty one) days.

**Իրավական Ծախսեր**

10.8 «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերությունը Ապահովագրական ընկերության գրավոր համաձայնության հիման վրա Պայմանագրի Հավելված 1-ում սահմանված սահմանաչափերի շրջանակներում տրամադրում է ճանապարհորդության ընթացքում Քարտատիրոջը մարմնական վնասվածք հասցրած, հիվանդության կամ մահվան պատճառ դարձած որևէ երրորդ անձի դեմ դատական հայց ներկայացնելու համար իրականացված իրավական ծախսերի հատուցման ծածկույթ:

**Բաց թողնված միջանկյալ թռիչք**

10.9 Քարտատիրոջը հատուցում կտարամադրվի Հավելված 1-ում սահմանված սահմանաչափերի համաձայն՝ ճանապարհորդության, բնակության և սննդի ողջամիտ լրացուցիչ ծախսերի համար, որպեսզի Քարտատերը շարունակի նախօրոք ամրագրված ճանապարհորդությունը՝ համաձայն իր երթուղու, եթե Քարտատերը բաց թողնի թռիչքը ստորև նշված իրադարձությունների հետևանքով՝

10.9.1 Ավիաընկերությունը, որով Քարտատերն ամրագրել էր իր ուղևորությունը, չի կարողանում Քարտատիրոջը ժամանակին հասցնել օդանավակայան՝ վատ եղանակային պայմանների (չներառելով եղանակային պայմանները, որոնք հանդես են գալիս որպես բնական աղետ), գործադուլների կամ մեխանիկական անսարքության պատճառով:

10.9.2 Քարտատերը պետք է փորձի ստանալ թռիչքի ուշացման և միջանկյալ թռիչքը բաց թողնելու ծախսերը ավիաընկերությունից: Այս փաստի հավաստիությունը կստուգվի, եթե Պայմանագրի այս Բաժնով հատուցման հայտ ներկայացվի Քարտատիրոջ կողմից: Եթե Քարտատիրոջը չի հաջողվում ավիաընկերությունից ստանալ ամբողջական կամ մասնակի հատուցում, հատուցման հայտերի կարգավորողը կարող է ավիաընկերությանը դիմել միջանկյալ թռիչքի ծախսերը ստանալու համար:

**ԲԱԺԻՆ 10-ի հատուկ բացառություններ**

10.10 Ի լրումն հիմնական բացառությունների, հետևյալ բուժումները, կետերը, պայմանները, գործողությունները և դրանց առնչվող կամ դրանցից բխող ծախսերը չեն ներառվում Ծանապարհորդության անհարմարավետություններից ապահովագրության ծածկույթի մեջ՝

- 1) հատուցում չի տրամադրվում ուշացման առաջին 4 ժամերի դիմաց, որը հանդիսանում է չհատուցվող գումար, ինչպես սահմանված է Հավելված 1-ով (բացառությամբ Հարձակման

**Legal Expenses**

10.8 The **Claims Administrator** will, with the **Underwriters** written consent, provide cover for legal expenses incurred up to the limits as shown in Appendix 1 of this **Certificate** arising from the pursuit of a claim against a third party who has caused **Bodily Injury** to or **Illness** of the **Cardholder** whilst on a **Journey**.

**Missed Connection**

10.9 We will pay the Cardholder up to the limits shown in Appendix 1 of this Certificate for the reasonable extra costs of travel, accommodation and food incurred in order for the Cardholder to continue with a pre-booked journey in accordance with the Cardholder’s itinerary should the Cardholder miss a flight connection due to:

10.9.1 The airline with which the Cardholder is booked to travel being unable to deliver the Cardholder in sufficient time to the connecting airport to meet their connecting flight due to poor weather conditions (but not including weather conditions defined as natural catastrophe), a strike, industrial action or mechanical breakdown.

10.9.2 The Cardholder must attempt to recover delay costs or missed connection costs from the airline. Evidence of this will be sought if a claim is being made against this Section of the Certificate. The claims handler may also pursue the airline for these missed connections costs should you be unable to make a full or partial recovery.

**Specific Exclusions Applying To SECTION 10**

10.10 In addition to the General Exclusions, the following treatment, items, conditions, activities and their related or consequential expenses are specifically excluded from the cover provided by this Section:

- (i) Payment in respect of the first 4 (four) hours of delay (excluding payment for Hi-jack); being the

<p>դեպքերի),</p> <p>2) Բաժին 10-ով նախատեսված ցանկացած կորուստ կարող է վերականգնվել միայն մեկ Քարտապանի կողմից քարտի ծրագրին համապատասխան, որի համար կազմվել է սույն պայմանագիրը,</p> <p>3) միևնույն ուղևորությամբ ճանապարհորդող երկուսից ավել Քարտատերերին տրամադրվող հատուցումները,</p> <p>4) ուշացում, որն առաջանում է Քարտատիրոջ կողմից անհրաժեշտ ճիշտ փաստաթղթեր չներկայացնելու արդյունքում,</p> <p>5) ուշացում, որն առաջանում է Քարտատիրոջ կողմից մեկնման վայր հասնելու համար անհրաժեշտ ժամանակ չսահմանելուց՝ հաշվի առնելով նախօրոք իրեն հայտնի հանգամանքները,</p> <p>6) ուշացում, որն առաջանում է կառավարության կողմից որևէ ծառայության պաշտոնական դադարեցման կամ չեղյալ համարելու արդյունքում,</p> <p>7) ուղեբեռի ուշացում, փաստաթղթերի կորուստ, կորուստներ, ժամանակավոր կորուստ/ շփոթություն, որոնք չեն ծանուցվել ուստիկանությանը հայտնաբերման պահից 24 ժամվա ընթացքում կամ չկա ավիաընկերության, առաքող ընկերության կամ նրանց պատասխանատու գործակալի կողմից գրավոր հայտարարություն իրենց պայմաններով սահմանված ցանկացած ժամկետով, և «Գույքի Անկանոնության Ձեկույցի» համաձայն,</p> <p>8) հարձակման դեպքեր, երբ Քարտատերը հանդիսանում է տուժող կապված Քարտատիրոջ կամ նրա Ընտանիքի կամ գործունեության հետ կապված ռիսկի ավելացմամբ,</p> <p>9) տուրիստական գործակալության, ուղևորությունների կազմակերպչի, ապահովագրողի, ապահովագրական գործակալի կամ փոխադրողի դեմ դատական հայց ներկայացնելու հետ կապված իրավական կամ այլ ծախսերը: Ընդ որում, այս բացառությունը վերաբերում է միայն այն տուրիստական գործակալությանը, ուղևորությունների կազմակերպչին, ապահովագրողին, ապահովագրական գործակալին կամ փոխադրողին, որը համարվում է պաշտոնական ճանապարհորդության կողմ և ոչ թե ճանապարհորդության ընթացքում ուղղակիորեն Քարտատիրոջ կողմից գրանցված ցանկացած երրորդ կողմի փոխադրող ընկերություն (սույն բացառությունը վերաբերում է իրավական ծախսերի ծածկույթին),</p> <p>10) ցանկացած հայց, որից Ապահովագրական ընկերության կարծիքով պատճառաբանված օգուտ ստանալու համար բավարար հիմքեր չկան (սույն</p>	<p>Excess as stated in Appendix 1;</p> <p>(ii) Any loss event under Section 10 can only be recovered by one <b>Cardholder</b> under this scheme attached to the card program to which this <b>Certificate</b> has been incorporated.</p> <p>(iii) Payment in respect of more than 2 (two) <b>Cardholders</b> travelling on the same journey;</p> <p>(iv) Delay resulting from the failure of the <b>Cardholder</b> to provide the necessary correct documentation;</p> <p>(v) Delay resulting from the failure of the <b>Cardholder</b> to allow reasonable time to reach the point of departure given the circumstances known at the time;</p> <p>(vi) Delay arising as a result of any official Government suspension or cancellation of a service;</p> <p>(vii) In respect of <b>Baggage</b> delay or loss of documents, loss, temporary loss/misplacement not reported to either the police within 24 (twenty four) hours of discovery and a written report obtained or airline, shipping line or their handling agent within any timescales stated in their terms and conditions and a 'Property Irregularity Report' obtained from such carrier;</p> <p>(viii) In respect of <b>Hi-jack</b>, claims arising from the <b>Cardholder</b> being individually selected as a victim as a result of their or their <b>Family</b> or business activities causing a reasonable expectation of increased risk;</p> <p>(ix) In respect of Legal expenses, any costs or expenses incurred in pursuing claims against a travel agent, tour operator, insurer, insurance agent or carrier, but this exclusion only applies to the travel agent, tour operator, insurer, insurance agent or carrier contracted as part of the original <b>Journey</b> and not any third party's carrier booked directly by the <b>Cardholder</b> during the <b>Journey</b>;</p> <p>(x) In respect of Legal expenses, any claim where in the opinion of the <b>Underwriters</b> there is insufficient prospect of success in obtaining a</p>
---	---

բացառությունը վերաբերում է իրավական ծախսերի ծածկույթին),

11) որևէ գործատուի հանդեպ կամ ցանկացած մասնագիտական, առևտրային գործունեություն, առքուվաճառք իրականացնողի դեմ ներկայացված հայցերի հետ կապված ծախսեր (սույն բացառությունը վերաբերում է իրավական ծախսերի ծածկույթին),

12) առանց «Ինթերնեյշնլ ՍՈՍ» ընկերության լիազորության կամ միջամտության ձեռք բերված ապահովագրական ծածկույթ (սույն բացառությունը վերաբերում է իրավական ծախսերի ծածկույթին),

13) մասնագիտական անփութության, տույժերի, տուգանքների կամ պատասխանատվություն առաջացնող վնասների հետ կապված իրավական ծախսեր, հայցեր:

reasonable benefit;

(xi) In respect of Legal expenses, claims against any employer or whilst carrying on any business, trade or profession;

(xii) In respect of Legal expenses benefits rendered without the authorisation and/or intervention of **International SOS**; and

(xiii) In respect of Legal expenses, claims for professional negligence, fines, penalties, or punitive damages.

**ԲԱԺԻՆ 11. ԿՈՐՈՒՍ ԵՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ (ՔԱՐՏԻ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)**

11.1 Ապահովագրողը կփոխհատուցի Քարտատիրոջը նրա կրած ֆինանսական վնասների համար, որոնք առաջացել են նրա Քարտի չարտոնված/չլիազորված օգտագործումից՝ Քարտի կորստի, գողության կամ կրկնօրինակման արդյունքում, ըստ Հավելված 1-ում նշված սահմանաչափերի՝ պայմանով, որ վնասը տեղի է ունեցել քարտի կորստի կամ գողության մասին Քարտատիրոջ կողմից Ապահովադիրին տեղեկացնելուց առաջ 72 ժամվա և տեղեկացումից հետո 168 ժամվա ընթացքում:

Սույն պայմանագրով սահմանված Պատահարը պետք է տեղի է ունենա Ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում:

11.2 Հատուցումը սահմանափակվում է յուրաքանչյուր Քարտատիրոջ համար երկու հայտով մեկ տարվա ընթացքում:

11.3 Ապահովադիրը պետք է Քարտի կորստի կամ գողության մասին տեղեկանալուց անմիջապես հետո.

- Արձանագրի տվյալ տեղեկատվությունը և ձեռնարկի բոլոր անհրաժեշտ և ողջամիտ քայլերը հետագա գործարքները կանխելու համար,
- Անվավեր դարձնի նշված Քարտը,
- Հրապարակի Քարտի անվավեր ճանաչման փաստը՝ ԱԿԲԱ ԲԱՆԿԻ քարտերի մասին գործող կանոնների և ընթացակարգերի համաձայն:

11.4 Ապահովադիրը չպետք է կարգավորի կամ համաձայնվի կարգավորել ցանկացած հայց առանց Երրորդ կողմի ապահովագրողի հետ նախապես

**SECTION 11: LOST or STOLEN (CARD FRAUD)**

11.1 Underwriters will indemnify the Cardholder, subject to the Limits of Indemnity set out in Section 9 below, for financial loss arising out of the unauthorised use of their Card, following loss, theft or duplication of the Card, providing that: The loss occurs within the 72 hours prior to and the 168 hours after the Cardholder notifies the Policyholder of the loss or theft of the Card; The Occurrence, as defined herein, occurs during the

11.2 Period of Insurance. Indemnity is limited to two claims per Cardholder per annum.

11.3 The Policyholder must, immediately on receipt of advices that a Card has been lost or stolen:

- (i) Enter into their records such information and take all reasonable steps to stop further transactions;
- (ii) Cancel said Card;
- (iii) Publish such cancellation in accordance with ACBA card rules and procedures in effect at that time.

11.4 The Policyholder is not to settle or agree to settle any claims without the prior agreement of the Third Party Administrator. Third Party Administrator should respond to the Policyholder within 7 working days of the

<p>համաձայնեցնելու: Երրորդ կողմի ապահովագրողը պետք է պատասխանի Ապահովագրին՝ նրանից հայտի վերաբերյալ տեղեկանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:</p> <p>11.5 Քարտի կորուստը, գողությունը կամ կեղծումը կանխելու նպատակով Քարտատերը պետք է ցուցաբերի ողջամիտ զգուշավորություն:</p> <p>11.6 Քարտատերը պետք է ապահով պահպանի Քարտը, PIN-կոդը և այլ ծածկագրերը:</p> <p>11.7 Քարտատերը պետք է գաղտնի պահի իր PIN-կոդը և ինքնական չբացահայտի կամ չհրապարակի այն այլ անձանց, չգրառի այն այնպես, որ դա հասանելի դառնա այլ անձանց:</p> <p>11.8 Քարտատերը չպետք է ինքնական բացահայտի, հրապարակի կամ գրառի Քարտով գործարքներ կատարելու համար անհրաժեշտ անվտանգության ծածկագրերն ու գաղտնաբառերն այնպես, որ դրանք հասանելի դառնան կամ կարդացվեն այլ անձանց կողմից:</p> <p>11.9 Եթե Քարտատիրոջ կամ Քարտատիրոջ անունից հանդես եկող որևէ այլ անձի կողմից կիրառվում են որևէ զեղծարար միջոցներ կամ սարքավորումներ սույն Պայմանագրով սահմանված ապահովագրական ծառայություններից օգտվելու համար, Քարտատիրոջ՝ Պայմանագրով սահմանված որոշ կամ բոլոր իրավունքները անմիջապես չեղյալ են համարվում:</p> <p>11.10 Ցանկացած իրադարձության մասին, որը կարող է ապահովագրական հայտի հիմք հանդիսանալ, պետք է գրավոր ծանուցել Ապահովագրական ընկերությանը պատահարի տեղի ունենալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում: Բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, փաստերը և վկայությունները, որոնք պահանջվում են Ապահովագրական ընկերության կողմից, պետք է վերջինիս տրամադրվեն Ապահովագրի, քարտատիրոջ կամ վերջինիս իրավաբանական ներկայացուցչի հաշվին: Ապահովագրական հայտային դիմումը պետք է լրացվի Քարտատիրոջ կողմից և ներկայացվի Ապահովագրական ընկերությանը 90 (իննսուն) օրվա ընթացքում: Բոլոր պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն բնօրինակով, այլ ոչ թե պատճենահանված:</p> <p>11.11 Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական ծածկույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն տրամադրվում է որևէ այլ ապահովագրական պայմանագրով կամ այլ աղբյուրի միջոցով, Քարտատերն իրավունք ունի ներկայացնել միայն այն ծախսերը, որոնք հատուցման ենթակա չեն նման այլ պայմանագրերով կամ աղբյուրներով:</p> <p>11.12 Ապահովագրական ընկերությունը կարող է ցանկացած ժամանակ իր սեփական միջոցների հաշվին և առանց Պայմանագրի խախտելու</p>	<p>Policyholder's notice of the claim.</p> <p>11.5 The Cardholder must take reasonable care to prevent loss, theft or fraud</p> <p>11.6 The Cardholder must keep the Card, PIN or any other security numbers and passwords secure.</p> <p>11.7 The Cardholder must keep his/her PIN safe and not voluntarily disclose or divulge said PIN to another person or record said PIN in such a way that it could be accessed or read by another person.</p> <p>11.8 The Cardholder must not voluntarily disclose, divulge or record in such a way that could be accessed or read by another person any security numbers and passwords that could be used for a card transaction.</p> <p>11.9 If fraudulent means or devices are used by the Cardholder and/or anyone acting on his/her behalf, to obtain any Benefits provided under this Policy, any and all rights in respect of the concerned Cardholder in terms of this Policy shall be forfeited immediately.</p> <p>11.10 In the event of circumstances taking place which give rise to a claim the Policyholder must be notified in writing within 30 days of the circumstances occurring. All information, consents and evidence required by Underwriters shall be provided at the expense of the Policyholder or Cardholder or their legal representative. A claim form must be completed by the Cardholder and submitted to Crawford within 90 days of the loss being incurred. This time limit may be extended subject to the prior approval of Underwriters where supporting accounts are not available in time. All documents submitted in respect of expenditure incurred must be originals and not photocopies.</p> <p>11.11 If the Benefits of this Policy are covered in whole or in part by any other insurance policy and/or other source, the Cardholder shall only be entitled to claim those costs, which cannot be recovered by the Cardholder from such other policy (s)/ sources.</p> <p>11.12 Underwriters may at any time and at their own expense and without prejudice to this Policy take proceedings in the name of the Cardholder to obtain</p>
---	--



կատարել քայլեր՝ ապահովագրական պատահարի առաջանալու հիմքում ընկած կորստի գծով Քարտատիրոջ անունից որևէ երրորդ անձից փոխհատուցում կամ երաշխիքներ ստանալու համար:

11.13 Հատուցումները փոխանցվում են այն հաշվին, որը ենթարկվել է զեղծարարության, եթե հասանելի չի որևէ այլ հաշվեհամար՝ սահմանված Ապահովադրի կողմից:

11.14 Եթե Քարտատերը հատուցում ստանալու հայցով դիմում և փոխհատուցում է ստանում այլ աղբյուրից՝ նվազեցնելով իր զուտ կորուստը, ապա այդ գումարի չափով Ապահովագրողին է վերադարձնում հատուցման գումարը:

**ՔԱԺԻՆ 11-ի հատուկ բացառություններ**

11.15 Սույն Պայմանագրի շրջանակներում չի հատուցվում որևէ կորուստ, վնաս, հայտեր կամ կանխարգելիչ, վերականգնողական կամ այլ ծախսեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում կամ վերաբերում են.

1. տվյալների հաշվարկմանը, համեմատությանը, տարբերակմանը, հաջորդականությանը և մշակմանը, ներառյալ որևէ տվյալների փոփոխություն, ներառյալ նահանջ տարվա հաշվարկները, որևէ համակարգչային համակարգ, սարքավորումներ կամ ծրագրեր և/կամ որևէ միկրոչիպեր կամ այլ նմանատիպ սարքավորումներ՝ համակարգչային կամ ոչ համակարգչային՝ անկախ այն հանգամանքից գույքը ապահովադրին է, թե ոչ:
2. ցանկացած փոփոխություն, վերափոխում, վերաձևակերպում տվյալների հաշվարկում, համեմատություն, տարբերակում, հաջորդականություն և մշակում, ներառյալ որևէ տվյալների փոփոխություն, ներառյալ նահանջ տարվա հաշվարկները, որևէ համակարգչային համակարգ, սարքավորումներ կամ ծրագրերի և/կամ որևէ միկրոչիպեր կամ այլ նմանատիպ սարքավորումներ՝ համակարգչային կամ ոչ համակարգչային՝ անկախ այն հանգամանքից գույքը ապահովադրին է, թե ոչ:

11.16 11.15 կետը կիրառելի է անկախ որևէ այլ պատճառի կամ դեպքի, որը նպաստում է կորստի, վնասվածքի, ծախսերի և պահանջների միաժամանակյա կամ որևէ հաջորդականությամբ ի հայտ գալուն:

compensation or secure an indemnity from any third party in respect of any loss giving rise to the provision of Benefits.

11.13 Indemnification will take place by means of a credit to the account on which the fraudulent transaction took place or if not possible to any other account defined by Policyholder.

11.14 If the Cardholder makes any recovery against the claim from another source, reducing their net loss, Underwriters hereon will be reimbursed to the extent of that recovery.

**Specific Exclusions Applying To SECTION 11**

11.15 This Policy does not cover any loss, damage, cost, claim or expense, whether preventative, remedial or otherwise, directly or indirectly arising out of or relating to:

- (i) the calculation, comparison, differentiation, sequencing or processing of data involving any date change, including leap year calculations, by any computer system, hardware, programme or software and/or any microchip, integrated circuit or similar device in computer equipment or non-computer equipment, whether the property of the insured or not;
- (ii) any change, alteration or modification involving any other date change, including leap year calculations, to any such computer system, hardware, programme or software and/or any microchip, integrated circuit or similar device in computer equipment or non-computer equipment, whether the property of the insured or not.

11.16 Clause 11.15 applies regardless of any other cause or event that contributes concurrently or in any sequence to the loss, damage, cost, claim or expense.

**Սույն Պայմանագրով չեն հատուցվում՝**

- 11.17 Վնասներ, որոնք առավելապես հատուցվում կամ վերականգնվում են Քարտատիրոջ ունեցած որևէ այլ ապահովագրության պայմանագրով կամ ապահովագրական ծրագրերով,
- 11.18 Ձեղծարարության պատճառով կրած վնասներ, որոնք տեղի են ունեցել ավելի քան 72 ժամ առաջ մինչ Քարտի կորստի, առևանգման և կրկնօրինակման մասին Ապահովադրին տեղեկացնելը,
- 11.19 Ձեղծարարության պատճառով կրած վնասներ, որոնք տեղի են ունեցել Քարտի կորստի, առևանգման և կրկնօրինակման մասին Ապահովադրին տեղեկացնելուն հաջորդող 168 ժամից հետո,
- 11.20 Կորուստներ, որոնք տեղի են ունեցել նախքան Քարտատիրոջ Քարտի ստանալը,
- 11.21 Կորուստներ, որոնք առաջացել են կամ որևէ կերպ կապված են ալկոհոլի, թմրանյութերի կամ դրանց չարաշահման հետ կամ Քարտատերը ճանաչվել է ալկոհոլից կամ թմրանյութերից կախվածություն ունեցող, եթե Քարտատերը չապացուցի, որ այդ կախվածությունը չի նպաստել Քարտի կորստին,
- 11.22 Հայտեր, որոնք առաջացել են Քարտատիրոջ կողմից Քարտի կորուստը կամ առևանգումը կանխելու նպատակով խելամիտ միջոցներ չձեռնարկելու պատճառով,
- 11.23 Հայտեր, որոնք առաջացել են Քարտատիրոջ կողմից իր հաշվեհամարին ամրագրված PIN-կոդը, անվտանգության համարները և/կամ ծածկագրերը անօրինական օգտագործումից պահպանելու նպատակով խելամիտ միջոցներ չձեռնարկելու պատճառով,
- 11.24 Որևէ անօրինական գործողություն կամ անօրինական գործողության փորձի իրականացում,
- 11.25 Պատճառահետևանքային վնաս, եթե այն նշված չէ որպես ապահովագրության հատուկ ծածկույթով ապահովագրված:
- 11.26 Սույն պայմանագիրը չի հատուցում ցանկացած տեսակի Ֆինանսական Երաշխիք, Գրավի կամ Վարկային Փոխհատուցում:

**Քարտատիրոջ պարտավորությունները հայտի դեպքում**

11.27 Քարտատիրոջ կողմից հայտի ներկայացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- 1. Քարտի կորստի կամ գողության մասին պետք է

**This Policy does not cover:**

- 11.17 Losses, which are more specifically covered by or recoverable from any other insurance policy or insurance programme under which the Cardholder is covered;
- 11.18 Losses incurred for fraudulent transactions which occurred prior to the 72 hours before the notification to the Policyholder of the loss, theft or duplication of the card;
- 11.19 Losses incurred for fraudulent transactions which occurred following the 168 hour period after the notification to the Policyholder of the loss, theft or duplication of the card;
- 11.20 Losses occurring prior to receipt of the Card by the Cardholder;
- 11.21 Losses arising from or in any way connected with alcohol, drug or substance abuse or where the Cardholder is a recognised addict of alcohol or drugs, unless the Cardholder can prove that the addiction did not contribute to the loss;
- 11.22 Claims resulting from the failure of the Cardholder to exercise all reasonable care to protect their Card from loss or theft;
- 11.23 Claims resulting from the failure of the Cardholder to exercise all reasonable care to protect their PIN, security numbers and/or passwords linked to the Cardholder’s account from unauthorised use.
- 11.24 The Cardholder’s commission of, or the attempt to commit an unlawful act;
- 11.25 Consequential loss other than stated as being specifically covered.
- 11.26 This policy does not cover any form of Financial Guarantee, Surety or Credit Indemnity.

**CARDHOLDER RESPONSIBILITY IN THE EVENT OF A CLAIM**

11.27 In the event of the Cardholder wishing to claim under this Certificate, the following procedures must be followed:

- 1. The loss or theft of the card and must be reported to the local police and a police report obtained detailing the circumstances if the card is stolen.

հայտնել տեղական ոստիկանություն և ստանալ Քարտի գողության հանգամանքները մանրամասնող ոստիկանության եզրակացությունը:

2. Քարտի կորստի, գողության կամ որևէ զեղծարարության մասին պետք է հայտնել Բանկին որքան հնարավոր է շուտ:
3. Հայտի մասին պետք է հաղորդվի Ապահովագրական ընկերությանը՝ նրան ներկայացնելով լրացված հայտային դիմումը, որին պետք է կցված լինի Քարտատիրոջ հաշվի քաղվածքի պատճենը, որտեղ նշվում է կեղծ գործարքի մասին, ինչպես նաև նրան պետք է ներկայացվի տեղի ոստիկանության հաշվետվությունը, եթե այդպիսին կա:
4. Այն դեպքում, երբ հայցի հավաստիության վերաբերյալ կասկած է ծագում, ապա դրա հավաստիությունն ապացուցելու պատասխանատվությունը դրվում է Քարտատիրոջ վրա:
5. Քարտատերը պետք է լիովին համագործակցի Ապահովագրական ընկերության, Բանկի և/կամ տեղի ոստիկանության հետ Քարտի կորստի, առևանգման և զեղծարարության հետ կապված ցանկացած հետաքննության հարցով:
6. Հայտ ներկայացնելու դեպքում Պայմանների կամ պարտավորության խախտումները իրավունք են տալիս Ապահովագրական ընկերությանը նվազեցնել կամ մերժել հատուցման գումարը

2. The loss or theft of the card and any fraudulent transaction must be reported to the Bank as soon as reasonably possible.

3. The claim must be reported to the Underwriters and a claims form must be completed and submitted, including a copy of the Cardholder's account statement highlighting the fraudulent transactions together with the local police report.

4. In the event of doubt about the veracity of the claim, the onus is on the Cardholder to prove the validity of the claim.

5. The Cardholder must co-operate fully with the Underwriters and/or local police in any investigation into the loss or theft of the Card or the fraudulent transactions thereon.

6. Any failure to comply with the Conditions of this Certificate or the responsibilities in the event of a claim will give Underwriters the right to reduce or refuse a claim payment.

## ԲԱԺԻՆ. 12 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**12.1 ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ.** Ապահովագրական ծածկույթի նկարագրությունը.

Հատուցումների ընթացակարգի համաձայն, եթե հատուցվող գնումը կամ նվերի տեսքով տրամադրված գնումը գողացել կամ վնասել են, ապա փոխհատուցումը կկատարվի համաձայն Բաժին 12.1.1-ի:

Գնումների ապահովագրություն. գնահատումն իրականացվում է Բաժին 12.1.2 -ում նշված գումարների սահմաններում:

Կորուստները պիտի ի հայտ գան գնման Ապահովագրումից.

ա) հայրենիքում 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում, բ) արտասահմանում 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում: Ապահովագրված գնման որևէ գրանցում անհրաժեշտ չէ:

Սույն ծածկույթի գծով սահմանված է ոչ պայմանական

## SECTION 12: PURCHASE PROTECTION

**12.1 PURCHASE PROTECTION:** Subject to the Schedule(s) of Benefits, if a Covered Purchase, or a Covered Purchase given as a gift, is stolen or damaged, benefits will be paid subject to Section 12.1.1,

Purchase Protection: Valuation, up to the amounts described in Section 12.1.2, Purchase Protection: Scope of Coverage.

Losses must occur within.

a) 120 Domestic days,

b) 120 International Overseas days of the date of the Covered Purchase. No registration of the Covered Purchase is necessary.

Coverage is excess of USD 50.00 each and every occurrence or any other applicable insurance or indemnity the Cardholder may have. Coverage is limited only to those amounts not covered by any other insurance or indemnity, up to the original purchase

չհատուցվող գումար՝ 50 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր և ամեն դեպքի համար: Ապահովագրությունը տարածվում է միայն այն գումարների մասով, որոնք ապահովագրված չեն որևէ այլ ապահովագրությամբ կամ հատուցմամբ և կարող է լինել առավելագույնը գնման իրական գումարի չափով: Սույն ապահովագրության ծածկույթը գործում է ի լրումն այլ գործող ապահովագրության պայմանների:

**12.1.1 Գնումների ապահովագրության գնահատում**

Ընկերությունը պատասխանատու չէ հետևյալ գումարների համար, որոնք ավելի են.

- 1) Գործող քարտային հաշվում արտացոլված Ապահովագրված գնման գումարից կամ
- 2) Ապահովագրված գնման վերանորոգման կամ համարժեք, նմանատիպ և նույն որակական հատկանիշներ ունեցող ապրանքով փոխարինման իրական արժեքից

Ապահովագրված գնումը մի քանի մասից բաղկացած լինելու դեպքում, Ապահովագրական Ընկերության պարտավորությունը հանդիսանում է վճարել միայն գողացված կամ վնասված մասի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս մասերը պիտանի չեն և չեն կարող փոխարինվել առանձին: Ոսկերչական և արվեստի գործերի դեպքում, որոնք բաղկացած են հավաքածուներից կամ զույգերով են, պարտավորությունը չի կարող լինել ավելին, քան գողացված կամ վնասված առանձին մասի արժեքն է՝ անկախ նրանից, թե նման մասը համամասնության հետ ինչ ընդհանուր հատուկ արժեք է ներկայացնում:

**12.1.2 Գնումների ապահովագրության ծածկույթ**

Ապահովագրական ընկերության առավելագույն պատասխանատվությունը սահմանվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ում:

Քարտատերերի համար սահմանված ապահովագրական ծածկույթի սահմանաչափերը սահմանափակվում են սույն Պայմանագրի Հավելված 1-ում սահմանված կարգով:

**12.2 ԳՆԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Այն դեպքում, երբ վարկային քարտով գնում կատարելու օրվանից 30 օրվա ընթացքում, գնված ապրանքը մամուլում, նույն կամ մեկ այլ խանութում գովազդվում է ավելի ցածր գնով, ապա Ապահովագրողը կփոխհատուցի Քարտապանին վճարված սկզբնական գնի և գովազդվող ցածր գնի միջև եղած տարբերության համար:

amount. In no event will this coverage apply as contributing insurance. This insurance is excess of all other valid and collectable insurance clauses found in other insurance or indemnity language.

**12.1.1 Purchase Protection Valuation**

The Company shall be liable for the lesser of the following amounts:

- 1) the amount of the Covered Purchase indicated on the Eligible Account; or
- 2) the actual cost to repair or replace the Covered Purchase with an item of like, kind and quality.

With respect to Covered Purchase which consist of articles in a pair or set, the Company’s liability shall be limited to the cost of any particular part(s) which may be stolen or damaged, unless the articles are unusable individually and cannot be replaced individually; provided, however, liability for items of jewellery or fine arts consisting of articles in a pair, set or collection will not be more than that cost of any particular parts which may be lost or damaged without reference to any special value which such article or articles may have as part of such pair, set or collection.

**12.1.2 Purchase Protection Scope of Coverage**

The maximum liability of the Underwriters under this Policy is as indicated in the Appendix 1. Coverage limits for Cardholders are subject to limitations stated in the Appendix 1.

**12.2 PRICE PROTECTION**

If in the event that, during the period of 30 days from the date of the purchase with the credit card, the item purchased is advertised at a lower price in the press or at the same or another store, Underwriters will reimburse the cardholder for the difference between the original purchase price paid and the lower advertised price.

**12.3 ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Եթե հատուցվող գնումը կամ նվերի տեսքով տրամադրված գնումը գողացել կամ վնասել են, ապա փոխհատուցումը կկատարվի համաձայն Հավելված 1-ի, «Ինտերնետային առաքման երաշխիք» ծածկույթի մեջ նկարագրված գումարի սահմաններում:

Հատուցվող գնումները գրանցելու կարիք չկա: Սույն պայմանագրի ապահովագրական ծածկույթը համարվում է հավելյալ ապահովագրություն որևէ այլ ապահովագրության կամ հատուցման համար, անկախ այն հանգամանքից այն կուտակելի է, թե ոչ, և չի կարող համարվել որպես այլ ապահովագրության կամ հատուցման համար ներդրում:

**12.3.1 Ինտերնետային առաքման պաշտպանության գնահատում**

Ընկերությունը պատասխանատվություն է կրում հետևյալ գումարներից ավելի փոքրի համար.

- 1) Գործող քարտային հաշվում արտացոլված Հատուցվող Գնման գումարը, կամ
- 2) Հատուցվող Գնման վերանորոգման կամ նման տեսակի կամ որակի իրով փոխարինման համար կատարված փաստացի ծախսերը:

Ապահովագրված գնումը մի քանի մասից բաղկացած լինելու դեպքում, Ապահովագրական Ընկերության պարտավորությունը հանդիսանում է վճարել միայն գողացված կամ վնասված մասի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս մասերը պիտանի չեն և չեն կարող փոխարինվել առանձին: Ոսկերչական և արվեստի գործերի դեպքում, որոնք բաղկացած են հավաքածուներից կամ զույգերով են, պարտավորությունը չի կարող լինել ավելին, քան գողացված կամ վնասված առանձին մասի արժեքն է՝ անկախ նրանից, թե նման մասը համամասնության հետ ինչ ընդհանուր հատուկ արժեք է ներկայացնում:

**12.4 ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏ**

Համաձայն Հավելված 1-ի, տրամադրվող ծածկույթը կրկնապատկում է արտադրողի տրամադրած երաշխիքային ժամկետը (առավելագույնը 12 ամիս), եթե այն չի գերազանցում Հատուցվող Գնումն անելու օրվանից երեսունվեց (36) ամիսը: Ծածկույթը տրամադրվում է նաև այն իրերի համար, որոնք ունեն խանութի բրենդի երաշխիք, միայն եթե խանութի երաշխիքը տարածվում է իրի բրենդի վրա: Եթե երաշխիքը ձեռք է բերվում ապրանքի հետ, որպես արտադրողի տրամադրած երաշխիք կամ խանութի տրամադրած երաշխիք, ծածկույթը կիրառվում է միայն բոլոր այլ երաշխիքների լրանալուց հետո, սակայն Հատուցվող գնումը գնելու պահից երեսունվեց (36) ամսվա ընթացքում: Հատուցվող գնումների գրանցումը

**12.3 INTERNET DELIVERY GURANTEE**

Subject to the Appendix 1, if a Covered Purchase, or a Covered Purchase given as a gift, is stolen or damaged, benefits will be paid subject to **Internet Delivery: Valuation**, up to the amounts described in **Internet Delivery: Scope of Coverage**.

No registration of the Covered Purchase is necessary. Coverage under this Policy is excess insurance over any other insurance or indemnity whether collectible or not and shall not be treated as contributing with any other insurance or indemnity.

**12.3.1 Internet Delivery Protection Valuation**

The Company shall be liable for the lesser of the following amounts:

- 1) the amount of the Covered Purchase indicated on the Eligible Account; or
- 2) the actual cost to repair or replace the Covered Purchase with an item of like, kind and quality.

With respect to Covered Purchase which consist of articles in a pair or set, the Company’s liability shall be limited to the cost of any particular part(s) which may be stolen or damaged, unless the articles are unusable individually and cannot be replaced individually; provided, however, liability for items of jewellery or fine arts consisting of articles in a pair, set or collection will not be more than that cost of any particular parts which may be lost or damaged without reference to any special value which such article or articles may have as part of such pair, set or collection.

